ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-36/24-I/SRCAS

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտական կենտրոն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արմեն Սերգոյի Հայրապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 58 760 400 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 58 760 400 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անկախության 1 Հ/հ՝ 900018005547 ՀՎՀՀ՝ 05512119 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԵՌՈԲԻ ՍԱՂՅԱՆ Կ. Տ.	Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Արմեն Սերգոյի Հայրապետյան Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Արմեն Հայրապետյան	

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-36/24-I/SRCAS պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արմեն Սերգոյի Հայրապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-36/24-I/SRCAS պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 58 760 400 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Արմեն Սերգոյի Հայրապետյան

Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-36/24-I/SRCAS պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	3
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	3
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	20
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	15
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	1
Գրքեր, մենագրություններ՝	6
Գիտաժողովի նյութեր՝	20
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արմեն Սերգոյի Հայրապետյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Ակոպով Արկադի Արտյոմի

Կ. S.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-36/24-Ի/SRCAS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	54 816 000	10 963 200	13 704 000	13 704 000	16 444 800
2.	տնտեսական ծախսեր՝	1 520 000	304 000	380 000	380 000	456 000
3.	այլ ծախսեր՝	2 424 400	484 880	606 100	606 100	727 320
Ընդամենը՝		58 760 400	11 752 080	14 690 100	14 690 100	17 628 120

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արմեն Սերգոյի Հայրապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիանա Համբարձումի Կոստանյան

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-36/24-Ի/SRCAS պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**1 520 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	620 000
2.	*գազի ծառայություն*	680 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	0
4.	*կապի ծառայություն*	220 000
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**2 424 400**
1.	նյութեր	119 400
2.	հրատարակման ծախսեր	710 000
3.	գործուղումներ, արշավախմբեր	400 000
4.	հնագիտական պեղումներ	1 060 000
5.	այլ	135 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արմեն Սերգոյի Հայրապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Լիանա Համբարձումի Կոստանյան

Կ. S.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-36/24-I/SRCAS պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Հայրապետյան Արմեն Սերգոյի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Ակոպով Արկադի Արտյոմի	գիտքարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Կոստանյան Լիանա Համբարձումի	Գլխավոր հաշվապահ	273 000	12	ներքին համատեղություն	40	3 276 000
Սառաջյան Անի Բորիսի	համակարգչային օպերատոր	180 000	12	հիմնական	40	2 160 000
Գինոսյան Նեկտար Մկտրտիչի	հավաքարար	52 000	12	համատեղություն	20	624 000
Գիտական անձնակազմ						
Կենտրոն ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն						
Հայրապետյան Սերգո Արտուշի	Առաջատար գիտաշխատող	419 000	12	հիմնական	40	5 028 000
Պետրոսյան Սարգիս Գարեգինի	Առաջատար գիտաշխատող	419 000	12	հիմնական	40	5 028 000
Հայրապետյան Արմեն Սերգոյի	Ավագ գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Սահակյան Կարինե Արամի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Հարությունյան Հասմիկ Հայկի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Բազեյան Կարինե Ռազմիկի	Ավագ գիտաշխատող	300 000	12	հիմնական	40	3 600 000
Բոյաջյան Արտաշես	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Ալեքսանյան Կարինե Վանիչկայի	Ավագ գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Ակոպով Արկադի Արտյոմի	Գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Այվազյան Գևորգ Սամվելի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Պետրոսյան Լուսինե Սարգսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Ավագյան Ինգա Էդուարդի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Վարդանյան Բենիկ Վարդանի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Հովհաննիսյան Ռոզա Պողոսի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Մատիկյան Հասմիկ Համլետի	Գիտաշխատող	230 000	12	հիմնական	40	2 760 000
Վարոսյան Երվանդ Ռազմիկի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000
Խաչատրյան Լիդա Արմենի	Լաբորանտ	60 000	12	համատեղություն	20	720 000

Նահատակյան Դավիթ Սամվելի	Գիտաշխատող	115 000	12	համատեղություն	20	1 380 000
Մկրտչյան Լևոն Ալբերտի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						54 816 000

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Արմեն Սերգոյի Հայրապետյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ (ստորագրություն) _____ (ԱԱՀ)

Կ. Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N 1-36/24-1/SBCAS պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ 3» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**կատարման ժամկետները**
1.	Գիտական սեմինարներ	Պարբերաբար կլսվեն հաղորդումներ ծրագրով նախատեսված ուղղություններով իրականացվող աշխատանքների ընթացքի մասին և կանցկացվեն քննարկումներ		Յուրաքանչյուր եռամսյակի ավարտին
2.	Դաշտային աշխատանքներ	ա/բանահավաքչական գիտարշավներ բ/գիտական գործուղումների կազմակերպում գ/ հնագիտական պեղումներ	Ժող. բանահյուսության, երգարվեստի նոր նմուշների գրառումներ, սոցիոհարցումների, ֆոկուս-խմբերի կազմակերպում, հնագիտական հետախուզություն, պեղումներ, չափագրումներ	ա/ I, II, և III եռամսյակներ բ/ տարվա ընթացքում գ/ III և IV եռամսյակներ
3.	Աշխատանք սկզբնաղբյուրների հետ	Արխիվային նյութերի և գիտական տեղեկատվության ձեռքբերում	Հավաքչական աշխատանք գրադարաններում, արխիվներում, մասնավոր և պետական ֆոնդերում	ա/ I-III եռամսյակներ
4.	Նյութերի կամերալ մշակում	Հավաքված նյութերի քարտագրում, անձնագրավորում, վերականգնում, կատալոգների կազմում, երաժշտական նյութերի նոտագրում		ա/ I-III եռամսյակներ
5	Նյութերի վերլուծություն և շարադրանք	Գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, մասնակցություն գիտաժողովների և սեմինարների		ա/ I-III եռամսյակներ
6	Գիտահրատարակչական աշխատանք	ա/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 27-րդ հատորի I պրակ բ/ մենագրությունների և արխիվային նյութերի ժողովածուների հրատարակում	Հայագիտական և հասարակական գիտություններին վերաբերող գրախոսված հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, գիտական տեղեկատվություն 1. «Էթիունի», 2. «Երվանդունյաց Մեծ Հայքը Ք.ա. IVդ. վերջին տասնամյակներին և Ք.ա III դ. (Ըստ գրավոր աղբյուրների)», 2. «Ալեքսանդրապոլի գավառի հասարակական-քաղաքական կյանքը XIXդ. Երկրորդ կեսին և XXդ. սկզբին», 3. «Ալեքսանդրապոլի գավառը Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918)», 4. «Պատմական Տայքի էթնոկրոնական պատկերն ըստ XVI-XIX դարերի օսմանյան վավերագրերի», 5. «Շիրակի արդի երաժշտական բանահյուսության	ա/ II եռամսյակի վերջ բ/ III և IV եռամսյակներ

			որոշ դրսևորումներ» խորագրերով մենագրությունները, 6. Մանկատածությունը հայոց մեջ (միջգիտակարգային քննություն)	
		գ/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուի 27-րդ հատորի II պրակի հրատարակում	Հայագիտական և հասարակական գիտություններին վերաբերող գրախոսված հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, գիտական տեղեկատվություն	գ/ IV եռամսյակ
7.	Գիտակազմակերպչական աշխատանք	ա/ հայրենագիտական զրույցներ կրթօջախներում և զորամասերում	ա/ Հայրենասիրության դասեր, ծանոթացում հայ հոգևոր ու նյութական բազմադարյա մշակույթի մասունքներին	ա/ Տարվա ընթացքում
		բ/«Եգանյանական ընթերցումներ» հնագիտական 4-րդ միջազգային գիտաժողով	բ/ Արդի հայ հնագիտության տարբեր հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ և հաղորդումներ	բ/ II եռամսյակի վերջ
		գ/«Ազգագրական-բանագիտական ընթերցումներ» հանրապետական 4-րդ գիտաժողով	գ/ ազգագրության տարբեր հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ և հաղորդումներ	գ/ III եռամսյակի վերջ
		դ/Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ), միջազգային 3-րդ գիտաժողով	դ/ Պատմական Մեծ Հայքի հյուսիսային շրջանների պատմության, հնագիտության, ազգագրության և մշակույթի տարբեր հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ և հաղորդումներ	դ/ III եռամսյակի վերջ
		ե/«Ափինյանական ընթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները», միջազգային 3-րդ գիտաժողով	ե/ երաժշտագիտության տարբեր հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ և հաղորդումներ	ե/ IV եռամսյակի սկիզբ

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Արմեն Հայրապետյան)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Արմեն Հայրապետյան)

(ստորագրություն) (անուն ազգանուն)